

ԳՈՐԱՆԻ 15. ГОРАНИ

♩ = 104

1-3.5. 1)

Յո - րեմ տմ գա - ցի, լո, վե - րիմ ար -

տու հող, ցո - րեմ տմ գա - ցի, լո, վե - րիմ ար - տու հող,

յա - րուկ մեմ սի - րե, լո, գը - սեմ՝ ա - րի բող,

յա - րուկ մեմ սի - րե, լո, գը - սեմ՝ ա - րի բող,

Աստ - ված ա - ցի - ծեր, վայ, գըմ արա ու հող:

♩ = 120

4.

Ախ, մո - րե մըր-ջան խա - րա - ֆի - լով շա - րուկ է,

մո - րե մըր - ջան խա - րա - ֆի - լով շա - րուկ է,

մո - րա ջի - գյար օ - տար աշ - խարի տա - րուկ է,

մո - րե մըր - ջան խա - րա - ֆի - լով շա - րուկ է,

մո - րա ջի - գյար օ - տար աշ - խարի տա - րուկ է:



կամ



կամ



Յորեն եմ ցանի, լո՛ւ, վերին արտու հող,
Յարուկ մ'եմ սիրե, լո, գրսեն՝ արի թող,
Աստվա՛ծ անիծեր, վա՛յ, զըն արտ ու հող:

Էդ վերան դաշտ, գրսեն, դուրան ու խտտով,
Էդ Մշու դաշտ, գրսեն, դուրան ու խտտով,
Էդ մանդրիկ ռեհան, ա՛խ, անուշ ու հոտով:

Ջեդ Մշու դաշտ, գրսեն, հինգ հարյուր գյուղ է,
Էդ վերան դաշտ, գրսեն, հինգ հարյուր գյուղ է,
Հը՛ր յարե՛, յա՛ր էլլո՛, յա՛ր, յարը՛մ, յարե՛:

Մորե մրջան խարաֆիլով շարուկ է,
Մորե մրջան խարաֆիլով շարուկ է,
Մորա ջիգյար օտար աշխարհ տարուկ է:

Ալաշկերտ, Մալաշկերտ ի՛նչ անուշ դեխ է,
Ալաշկերտ, Մալաշկերտ ի՛նչ անուշ դեխ է,
Շնչիկ մը գըշնչեր, վա՛յ, իմ վերքին դեղ է: